Ռոբերտ էլիբեկյան. Իրականի ու անիրականի սահմանագծին



Անցյալ դարի 60-ականներին ասպարեզ իջած նկարիչների այն սերնդից է Ռոբերտ էլիբեկյանը, որը նոր փուլ սկզբնավորեց արդի հայ կերպարվեստում: Գեղարվեստական թարմ մտածողությամբ և ազգայինի ու համաշխարհայինի յուրօրինակ համադրությամբ հատկորոշվող նրանց գործերը եկան կոտրելու խորհրդային արվեստի կարծրատիպերը՝ նոր օրակարգ ձևավորելով գեղարվեստի հայրենական տիրույթում:

ՀՀ ժողովրդական նկարիչ Ռոբերտ էլիբեկյանը շառավիղն է թիֆլիսահայ արվեստասեր շրջանակներին լայնորեն հայտնի էլիբեկյան գերդաստանի, որի ավագը՝ Վաղարշակ էլիբեկյանը 1922-1923 թթ. հիմնել ու ղեկավարում էր բազմազգ այդ քաղաքի Պատանի հանդիսատեսի թատրոնը: 1951-ից սկսյալ նա արդեն պաշտոնավարում էր տեղի Ստեփան Շահումյանի (ներկայումս՝ Պետրոս Ադամյանի) անվան հայկական թատրոնում: Առաջացած տարիքում էր, երբ ստեղծեց իր գեղանկարչական մանրապատումների շարքը՝ վերակենդանացնելով Թբիլիսիի կոլորիտն ու արվեստաշունչ ոգին:

Բնական է, որ նման ընտանիքում հասակ առած պատանի Ռոբերտը հետագայում պիտի ընտրեր դեպի արվեստ տանող ուղին, որը 1960 թ. նրան բերեց Երևան: Հիշելով Գողարվեստա-թատերական ինստիտուտում իր ուսումնառության տարիները՝ մեծանուն վարպետը պատմում է. «Շատ լավ ուսուցիչներ եմ ունեցել. Նրանք մեզ թողեցին ազատ մտածել: Ամենահետաքրքիր ուսուցիչն էլ, որն ի դեպ ինձ չի դասավանդել, Վռամշապուհ Շաքարյանն էր: Ամեն անգամ բարևելիս նա մեզ հորդորում էր չմոռանալ հին վարպետներին»: …Այս տարեմուտի տոնական օրերն էին, երբ ուզեցի այցելել Ռոբերտ էլիբեկյանի արվեստանոց: Վերջինիս վերաբերյալ տարիներ առաջ նրա արած մի գրառումը ինձ շատ էր տպավորել. «Ի՞նչն է պատճառը, որ ամեն օր գալիս եմ արվեստանոց: Նկարում եմ թե ոչ՝ այնքան էլ էական չէ: Տասնյակ տարիներ արդեն այս ռիթմով եմ ապրում: Ուրեմն գաղտնի մի ուժ կա, որը ձգում, բերում է ինձ այն տարածքը, որ արվեստանոց է կոչվում»:

Վարպետին տեսա բազկաթոռին նստած՝ ռադիո ունկնդրելիս: Ռադիոընդունիչի վրա Վիլյամ Սարոյանի, Եղիշե Չարենցի ու Կոստան Զարյանի լուսանկարներն էին, իսկ դրանց կողքին Մարիտիրոս Սարյանի «Նամականին»: Արվեստանոցի կենտրոնում 3 նկարակալներ կային՝ ձգած կտավներով: Մեկի վրա նոր-նոր ավարտած նկարն էր. մյուսները սպասում էին իրենց հերթին: Ընդարձակ արվեստանոցի պատերին էլ արդեն դասական դարձած նրա ստեղծագործություններն են՝ իրար նման ու միաժամանակ տարբեր իրենց գունային լուծումներով: Բոլորին միավորողն, իհարկե, էլիբեկյանական անշփոթելի ձեռագիրն է՝ խորհրդավոր ու անմեկնելի: Ակնառուն գույների հրավառությունն է, տոնահանդեսային տրամադրությունը: Այո՛, Ռոբերտ էլիբեկյանը

սովորական-առօրեականի մեջ ևս տոն է տեսնում՝ չառօրեականացնելով սակայն այդ տոն-երևույթը, որը միշտ նրա ու նրա արվեստի երկրպագուների հետ է:

Բնական է ուրեմն, որ նրա նկարներում դոմինանտը գույնը լիներ՝ իր հյութեղ ֆակտուրայով և արտիստիկ հնչեղությամբ: Էլիբեկյանական գիծն իր տարբեր դրսևորումներով՝ մենագիծ, ուրվագիծ, գալարներ և այլն, ի հայտ է գալիս նրա գրաֆիկական աշխատանքներում, որոնցում մատիտը հաճախ գիրկընդխառն է հանդես գալիս ջրաներկի ու տեմպերայի, ինչպես նաև գուաշի ու գունավոր կավճի հետ («Առավոտ», «Ճիչ. Ձուղա», «Փարիզյան տպավորություններ և այլն»): Դրանք ևս, ընդհանուր առմամբ, գունավառ գործեր են և իրենց գեղագիտությամբ ու կատարման ոճով էականորեն չեն տարբերվում գեղանկարներից, ավելին՝ կարծես վերջիններիս նախապատրաստությունը լինեն:
Նկարչի կտավները, չունենալով հանդերձ պատմողական սյուժեներ, առանձնանում են իրենց գեղարվեստական որոշակի ասելիքով: Վերջինս շատ դիպուկ է բնորոշել արվեստաբան Հենրիկ Իգիթյանը. «Նրա (Ռոբերտ Էլիբեկյանի–Լ. Լ.) ամբողջ ստեղծագործությունը ներկայանում է որպես բազմաթիվ արարներով, անվերջանալի և շլացուցիչ ներկայացում-հեքիաթ»: Մեր առջև, իրոք, այդ ներկայացում-հեքիաթի հերոսներն են՝ դերասանուհիներ՝ բեմելից առաջ ու հետո, աճպարարներ, մոդելներ, հրեշտակներ, դիցուհիներ՝ իրենց ողջ հմայքով, փայլով ու գեղեցկությամբ: Մի պահ քեզ թվում է, թե հայտնվել ես



կախարդական հայելիների թագավորությունում: Պայմանական մի աշխարհ է մեր առջև՝ բնակեցված երևակայական, իրական ու անիրական կերպարներով: Որքան էլ նկարիչը հաճախ է արել ինքնանկարներ կամ անդրադարձել իր արվեստագետ ընկերներին («Էդուարդ Խարազյան»,«Բարդուղ Վարդանյան» և այլն), միևնույն է, նրա նկարների տիրակալը Կինն է: Ընդ որում, ոչ թե այս կամ այն կոնկրետ կինը, այլ կին արարածն ընդհանրապես՝ որպես սիրո մշտահունչ մեղեդի ու սրտերի տիրական քրմուհի:

«Ինչպե՞ս է նա ձեռք բերել իր ոճը կամ ումի՞ց է ազդվել» հարցիս վարպետն անմիջապես հակադարձեց. «Չեմ սիրում «ազդվել» բառը. դա ամենահեշտ ճանապարհն է: Նկարելն, ի վերջո, ընթացք է, որի վրա կարող է ամեն ինչ ազդել՝ եղանակը, երաժշտությունը, բնության ձայները: Կարևորը մարդկային շփումներն են: Իմ վրա անջնջելի տպավորություն են

թողել հանդիպումներս ու զրույցներս Երվանդ Քոչարի, Կոստան Զարյանի, Լևոն Ներսիսյանի հետ: Դրանք ավելի կարևոր էին, քան դասախոսությունները: Մենք իրարից էինք սովորում»:

Ռոբերտ էլիբեկյանի արվեստում կարելի է հեռավոր արձագանքներ տեսնել նույնիսկ մեր հնագույն ժայռապատկերներից և հայ միջնադարյան մանրանկարիչների գույներից ու ռիթմերից: Այս առումով նա վերապահությամբ է մոտենում արվեստաբանների աշխատանքին, որոնք իրեն ժառանգորդն են համարում թիֆլիսահայ նկարիչներ Գեորգի Յակուլովի և Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի: «Թող ասեն,- ժպիտով վրա է բերում նա,- Հաճախ մե՛նք չգիտենք՝ ինչ ենք անում, իրե՞նք որտեղից իմանան»: Որպես իր համար նախընտրելի օրինակներ մատնացույց է անում իտալացի արվեստաբաններ, իսկ ավելի ճիշտ՝ արվեստի պատմաբաններ Ջորջո Վազարիին ու Լեոնելլո Վենտուրիին, ովքեր ոչ այնքան իրենց քննական տեսակետներն էին շարադրում կամ վերլուծություններ անում, որքան բարձրաձայնում էին նկարիչների մտքերն ու խոհերը՝ առավել կենտրոնանալով արվեստագետների կյանքի նկարագրության ու նրանց ապրած ժամանակի վրա:

Հետևելով Ռոբերտ էլիբեկյանի ստեղծագործական ընթացքի տրամաբանությանը՝ յուրաքանչյուր ոք բնականորեն կմտածեր, որ թատերատեսլարանային ուղղվածության նրա արվեստը օրերից մի օր անպայման պիտի բեմ բարձրանար՝ գտնելով իր բնական միջավայրը: «Ծնվել եմ թատրոնում. բա ի՞նչ պիտի նկարեի»,- ասում է հեղինակը՝ ինքն էլ չհիշելով, թե քանի՞ թատերական ներկայացում է ձևավորել կամ թատերական էսքիզներ արել:

Իսկ դրանք, իրոք, շատ են՝ օպերային ու դրամատիկ տասնյակ ներկայացումներ, ֆիլմեր և այլն: Հանդիսատեսի հիշողության մեջ մինչ օրս վառ են մնացել էլիբեկյանի ձևավորած Մինկուսի «Դոն Քիշոտ» բալետը, Լեոնկավալլոյի «Պայացներ» օպերան, Աղասի Այվազյանի «Զարենցի ուղղիչ տունը» ներկայացումը, այլ հիշարժան բեմադրություններ: Թերևս քչերը գիտեն որ ժամանակին նրա էսքիզներով են պատրաստվել Հայաստանի պարի պետական անսամբլի և Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի համույթի պարողների զգեստները: Նման դեպքերում նրա մոտ մանրուքներ չկան՝ սկսած հագուստների ծոպերից ու ժանյակներից մինչև բեմի ու նախաբեմի վարագույրները, բեմահարթակի դեկորներն ու լույսերը: Ուշագրավն այն է, որ նրա ձևավորած բեմական զգեստները սովորական հանդերձներ չեն, այլ զգեստ-կերպարներ:

Ստեղծագործական շուրջ 60-ամյա ճանապարհ անցած, արվեստում իրեն վաղուց հաստատած և արդեն լուսավոր հետագիծ թողած վարպետը՝ Ռոբերտ էլիբեկյանը, այնուամենայնիվ այն համոզման է, որ «անվերջանալի է վարպետության հասնելու ճանապարհը», և ինքը տակավին որոնումների մեջ է: Միաժամանակ խոստովանում է, որ կատարվել է արվեստագետի իր երազանքը. ստեղծել է «անհիրական մի իրականություն», որում շարունակում է ապրել ինքը՝ ապրեցնելով նաև մեզ բոլորիս:

Լևոն Լաճիկյան